



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2018 թվականի թիվ 15-Ա

ԱԼԻՍԱ ՍԵՅՐԱՆԻ ԲԵՋԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դեղձավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2018թ. հունվարի 27-ի թիվ 23 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ա.Բեջանյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Ալիսա Սեյրանի Բեջանյանին 2018 թվականի հունվարի 30-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Դեղձավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր և լուծել Ալիսա Բեջանյանի հետ 2017թ. դեկտեմբերի 4-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱՐՈՎՅԱՆ



30 հունվարի 2018թ.
ք. Իջևան